



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2020թ.

N -----

**Ք. Երևան Նաիրի Զարյան 22ա
«Ռադիո Ավրորայի» լրագրող
Անժելա Հարությունյանին
Էլ. Փոստը (info@radioaurora.am)**

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան 14.09.2020թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանի հասցեագրված Ձեր
16.09.2020

VERIFIED OCSP 16.09.2020 11:35:28 GMT+4

հարցմանը, Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230 հայտնում ենք, որ 2012 թվականին ՀՀ կառավարության ծրագրով Հայթաղ համայնքում կառուցվել է 18կմ խմելու ջրի ներտնտեսային ցանց, սակայն չի ընդունվել շահագործման նախկին օպերատոր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից, ինչպես նաև նրա իրավահաջորդ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ աշխատանքների թերի, անորակ, շինարարական և հետագա շահագործման նորմերին ոչ համապատասխան կառուցված լինելու պատճառաբանությամբ: Այդ ընթացքում Հայթաղի համայնքապետարանը բազմիցս դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը խմելու ջրագծի թերությունները վերացնելու և շահագործման ընդունելու խնդրանքով՝ միևնույն ժամանակ պատրաստակամություն հայտնելով համայնքապետարանի բյուջեից վճարել բոլոր կատարված աշխատանքների համար, սակայն մինչ օրս «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն չի ընդունել խնդրո առարկա ջրագիծը: Այդ իսկ պատճառով Հայթաղի համայնքապետարանը պլանավորել է, որ 2021 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարել առկա ջրագծերը գույքագրելու, թերությունները վերացնելու և շահագործման հանձնելու աշխատանքներ:

Ինչ վերաբերվում է համայնքի ճանապարհներին և լուսավորության համակարգին, ապա՝ հայտնում ենք, որ 2020 թվականի ընթացքում համայնքի 3 փողոցներում անցկացվել է լուսավորության համակարգ, և մինչև տարեվերջ ևս 4 փողոցներում կանցկանցվեն լուսավորության համակարգ, որի արդյունքում համայնքի ավելի քան 50 տոկոսը կունենա գիշերային լուսավորություն:

Հարգանքով՝

Հ. Մաթևոսյան

Կար՝ Ա. Հովհաննիսյան
Ռ. Սահակյան
Հեռ՝ /0237/ 2 13 77